Արձանագրություն 3

« ՀՑԹԻ-ԳՀԱՊՁԲ-02/24 » ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 01.03.2024թ. ժամը 16:00-ին

Նիստին մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Էդիտա Գզոյան - Տնօրեն (ԳՊ/ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ՝

Մ. Մաճկալյան –Պահեստապետ (ԳՊ/ԳԱ)
Տ. Մկրտչյան – Անվտանգության օպերատոր (ԳՊ/ԳԱ)
Դ.Ալեքսանյան- Հաշվապահ (ԳՊ/ԲԱ)
Ք.Նաջարյան- Ավագ գործավար,կադրերի բաժնի պատասխանատու (ԳՊ/ԲԱ)
Գնումները համակարգող՝ Ա.Խաչատրյան

Օրակարգ

1. Ընթացակարգի հաղթող ճանաչված մասնակիցների մասին

«ՀՑԹԻ-ԳՀԱՊՁԲ-02/24» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի որոշման հաստատում , շտկումների գնահատում :

« ՀՑԹԻ-ԳՀԱՊՁԲ-02/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքների ամփոփում

որոշեց.
ա/ ՍԵՅՖ ՎԻԺՆ ՍՊԸ-ի շտկված Հավելված 1.1-ը համարել անբավարար, քանի որ այն նորից ուղարկվել է առանց տեխնիկական բնութագրի տվյալներ պարունակող սյունակի, իսկ լիազորագիրը տրվել է 29.02.2024թ-ին, այսինքն հայտի ներկայացման ժամանակահատվածում՝ այն է 20.02.2024թ-ից 28.02.2024թ-ը, հայտը ստորագրողի էլեկտրոնային ստորագրությամբ հայտի հաստատման լիազորությունները վավեր չեն :
-Ինչպես նաև ձեռք է բերվել տեղեկատվություն ՍԵՅՖ ՎԻԺՆ ՍՊԸ-ի կողմից շտկված Հավելված 1.1-ում նշված ապրանքների մոդելների պարամետրերի վերաբերյալ՝ համացանցային տվյալների միջոցով, և կա անհամապատասխանություն՝ Dahua ֆիրմայի IPC-HFW2531T-ZS-S2 մոդելի տվյալներում Field of view –max resolution 2592*1944, իսկ հրավերով նախատեսվում է 2880*1620, S/N Ration 0.008 lux F1.5, իսկ հրավերով նախատեսվում է 0.007 lux F1.6, գիշերային տեսանելիություն 40մ է, իսկ հրավերով նախատեսվում է՝ 50մ:
-Ավտոմեքենաների պետահամարանիշերը ֆիքսելու համար IP տեսախցիկի մասով ներկայացված Dahua ֆիրմայի ITC237-PW6M-IRLZF1050-B մոդելի տվյալներում ոսպնյակի տվյալներն են ՝ 10-50mm F1.3 իսկ հրավերով նախատեսվում է՝ 5-50 mm 2.0: Ինչպես նաև ուղեփակոցի մասին ևս տվյալներ չկան :

Սահակյան Աշոտ Հրաչյայի ԱՁ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1–ի շտկումը համարել բավարար, իսկ լիազորագիրը ներկայացված էր հայտի փաստաթղթերի փաթեթում, պարզապես այն ծրագրում չէր բացվել:

-Հաշվի առնելով ՍԵՅՖ ՎԻԺՆ ՍՊԸ-ի հայտում արձանագրված վերոնշյալ անհամապատասխանությունները, ՍԵՅՖ ՎԻԺՆ ՍՊԸ հայտը մերժել համաձայն ՀՀ ԳՄՕ-ի 34-րդ հոդվածի 1 մասի և ՀՀ ԳՄՕ-ի 34-րդ հոդվածի 7 մասի համաձայն ընտրված մասնակից համարել Սահակյան Աշոտ Հրաչյայի ԱՁ-ին:

-Հրապարակել Պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը՝ սահմանելով անգործության ժամանակահատված՝ 10 օրացուցային օր,

-Ծանուցել Աշոտ Հրաչյայի ԱՁ-ին պայմանագիր կնքելու մասին, ներկայացնել Պայմանագրի նախագիծ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող
հանձնաժողովի նախագահ՝ _____ **Է. Գզոյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Դ.Ալեքսանյան**

_____ **Ք.Նաջարյան**

_____ **Տ.Մկրտչյան**

_____ **Մ. Մաճկալյան**

Գնումները համակարգող՝ **Ա.Խաչատրյան**